Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 33

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2008թ. օգոստոսի 6-ին ժամը 16:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած հերթական նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Վահե Դանիելյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Արամայիս Գրիգորյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի և կապի նախարար
Արայիկ Հովհաննիսյանը	«Հայաստանի ավագանիների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Վանիկ Սողոմոնյանը	«Ֆերմերների ազգային միավորում» ՀԿ-ի նախագահ
Աշոտ Ոսկանյանը	«Ագրոզարգացում» ՀԿ-ի նախագահ

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Կարինե Դանիելյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ, «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն

Նիստից բացակայում էին.

Վահրամ Ներսիսյանցը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի

	փոխնախագահ, ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական
Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Կարեն Նազարյանը	Հայաստանի միջեկեղեցական բարեգործական կլոր սեղանի գործադիր տնօրեն

Նիստին հրավիրված էին.

Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, Կառավարման Խորհրդի քարտուղար
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Տիգրանուհի Բաղդասարյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:
ՀՀ Վարչապետը նշեց, որ հաշվի առնելով ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի նիստերի հաճախականությունը, ակնհայտ է, որ Հազարամյակի մարտահրավեր ծրագիրը Հայաստանի Հանրապետությունում առաջ է ընթանում մեծ տեմպերով:

Նիստի օրակարգում ներկայացված էին հետևյալ հարցերը.

1. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում», IA-08/001 խորհրդատվական ծառայությունների մատուցման հայտ ներկայացրած կազմակերպությունների կարճ ցուցակի և Առաջարկ ներկայացնելու հրավերի քննարկում և հաստատում (տեղեկանքը և առաջարկ ներկայացնելու հրավերը կցվում են):

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության նոր կառուցվածքային/կադրային պլանի քննարկում և հաստատում (տեղեկանքը և կառուցվածքային/կադրային պլանը կցվում են):

3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչի շրջանակներում Գյուղատնտեսական գործունեության հետազոտության հաջորդ փուլերի համար խորհրդատվական ծառայությունների

մրցույթի տեխնիկական և ֆինանսսկան առաջարկների համատեղ գնահատման արդյունքների քննարկում և հաստատում (տեղեկանքը կցվում է):

4. Այլ հարցեր:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը, որից հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան» ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Արարատյան հարթավայրի դրենաժային համակարգի վերականգնման նախագծում և շինարարության վերահսկում», IA-08/001 խորհրդատվական ծառայությունների մատուցման հայտ ներկայացրած կազմակերպությունների կարճ ցուցակը և Առաջարկ ներկայացնելու հրավերը:

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Միաձայն որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության նոր կառուցվածքային/կադրային պլանը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Հարցը ներկայացվելուց հետո **միաձայն որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան» ծրագրի Մոնիտորինգի և գնահատման բաղադրիչի շրջանակներում Գյուղատնտեսական գործունեության հետազոտության հաջորդ փուլերի համար խորհրդատվական ծառայությունների մրցույթի տեխնիկական և ֆինանսսկան առաջարկների համատեղ գնահատման արդյունքները:

Օրակարգի հիմնական հարցերի սպառումից հետո Արա Հովսեփյանը ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամներին ի գիտություն հայտնեց, որ 2008թ. օգոստոսի 1-ին, մի շարք բանակցային հանդիպումներից հետո, Առաջին փաթեթում ընդգրկված ճանապարհների շինարարական աշխատանքների իրականացման համար պայմանագրեր են կնքվել վեց շինարարական ընկերությունների հետ:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստը արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը